Արձանագրություն N 4

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար բազկաթոռների ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-25/23 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

14 հոկտեմբերի 2025թ.
ժամը՝ 12:00

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Թորոսյան, Տ. Ղազարյան, Ն. Հարությունյան*, Տ. Բադալյան*,

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

*Նիստից բացակայում են Ն.Հարությունյանը և Տ.Բադալյանը

1. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտերի գնահատման մասին

1.1 Նիստը վերսկսվեց 14.10.2025 թվականին: Ի պատասխան ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի գրության, 13.10.2025 թվականին ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից ստացվել է պատասխան գրություն: Գնահատող հանձնաժողովը որոշեց շարունակել նիստը և ուսումնասիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերը:

Հանձնաժողովն արձանագրեց, որ Պահեստ 1 ՍՊԸ-ն և ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Պահեստ 1 ՍՊԸ-ի և Ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրերի կնքման վերաբերյալ

14.10.2025թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Պահեստ 1 ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժնով և ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին Ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժնով հայտարարել ընտրված մասնակիցներ, իսկ Ընթացակարգի մյուս մասնակիցների հայտերը մերժել:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ _____ Վարդան Հարությունյան

անդամներ՝ _____ Վարդան Թորոսյան

_____ Տիգրան Ղազարյան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան